

Ծերը կը վազեր սանդուխներէն վեր այնպէս որ երիտասարդներն հազիւ կը հասնէին իրեն, իսկ երբ դռան մօտեցաւ, եւ Գագրիկ «հոս» ըսաւ, ծերուն ուրախ երեսը մթազնեց, վայրկեան մը Գագրիկի թեւէն բռնեց, արգիլեց դուռը բանալու.— կը մտածեր, այո, այն կը մտածեր ինչ որ քիչ մը առաջ Գագրիկ գրուցեր էր. «մայր մը, քոյր մը մեռեր են»:

Բայց ինչ որ արգիլեց ուրիշին՝ չի կրցաւ արգիլել իւր սրտին, բացաւ դուռը եւ մտաւ: Քառակուսի սենեակ մ'եր լուսամուտը երդիկէն. դռան անմիջապէս դիմացը վառարան մը իւր գեղեցիկ բոցով խուցին աղբատիկ վիճակը կը լուսաւորէր եւ կը զուարթացներ. վառարանին երկու կողմը տախտակամած, վրան քանի մը կապերտ, ձիոց թամբք եւ տապալակք, կաշեայ մախաղք եւ զէնք, ահա սենեակը, ուր նստած էր Գրիգոր եւ տխուր կը մտածեր: Երբ դուռը բացուեցաւ եւ ինք տեսաւ Չաւէնի կերպարանքը, որ չորս տարուան միջոցին քիչ մը աւելի ճերմկեր էր միայն՝ վայրկեանին ճանչեց, «Չաւէն հայրիկ» ըսաւ եւ ցատկեց ուրախութեամբ վիզը փաթթուեցաւ, իսկ Չաւէն՝ «Ոհ, իմ իշխանիկս, աստուած քեզ պահէ» կ'ըսէր եւ աչքերէն արտասուք կը հոսէր: Երբ առաջին վայրկեանին յուզմունքն անցան,

— Չրուցէ՛, Չաւէն հայրիկ, ի՞նչ եղան իմ մայրս, քոյրերս...

Չէ՛ս խօսիր, ո՛հ ամէնքն էլ, ամէնքն էլ մեռան, ո՛վ աստուած իմ,— ըսաւ Գրիգոր եւ նստաւ տախտակին վրայ ու ձեռքը ճակտին տարաւ:

— Ոչ ամէնքն էլ, իշխանիկս, աստուած Արփենին քեզ պահեց, ինչպէս զքեզ իրեն:

Յեկեկանաց խղդրուկ ձայն մը ու «մայր իմ, մայր իմ... ո՛վ սիրելի մայրս... ո՛վ հրեշտակս» բառերը միայն կը լսուէին երբեմն, եւ չորս հոգուոյ շնչառութիւնը կարծես դադրած էր եւ լուռ այս որդիական ողբոց առջեւ. կրակը կը ճարճատէր, ոչինչ ուրիշ շշուկ չէր լսուէր սենեկին մէջ: Յեկեկանքը կ'ընդմիջէին երբեմն տխուր լռութիւն կը տիրէր, որու դռն հեկեկանք եւ հեծութիւն կը յաջորդէին դարձեալ: Գրեթէ ժամ մը այս վիճակը տեւեց եւ Չաւէնի օրինակին հետեւելով ամէնքը լռութեամբ յարգեցին նորա ողբը. մինչեւ ելաւ Գրիգոր ջուր ուզեց, խմեց, լուացուեցաւ: Դառնալով Չաւէնի՝

— Չաւէն հայրիկ,— ըսաւ,— չորս տարի է կ'երեւակայէի, կը գուշակէի թէ այս սրտիս ամենադառն գոյժը պիտի լսեմ, բայց այնչափ տկար է մարդկային սիրտը, որ շատ անգամ ինքզինքիս յոյս կ'ուտայի եւ զիս կը խաբէի... ո՛ր է հիմա Արփենին, լաւ՞ է, առո՞ղջ է...